

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԱՏԹԵՈՍ ՄԱՍՈՒՐՅԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Լիլիթ Սարվազյան
փիլիսոփայական գիտությունների թեկնածու
Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ի
Քաղաքագիտության և իրավունքի պատմության ամբիոն

Արևմտահայ իրականության մեջ իրավական մշակույթի լինելիությանը էապես նպաստել է հայ պարբերականներում ու հանդեսներում արտացոլվող քաղաքական հրապարակախոսությունը: Այս առումով բացառիկ նշանակություն է ունեցել XIX դարավերջին Ջոյոտնիայում հրատարակվող «Արևելյան Մամուլը», որի խմբագիր Մատթեոս Մամուրյանը բազմիցս հանդես է եկել իրավաքաղաքական հիմնահարցերի մեկնաբանությամբ: Նրա հայեցակարգը հիմնված է ազգի պատմական և քաղաքական իրավունքների պաշտպանության, ազգային-քաղաքակրթական ինքնության ու ինքնակառավարման ազատության գաղափարների վրա:

Վերլուծելով և համադրելով ամերիկյան ու արևմտեվրոպական մտածողների իրավափիլիսոփայական գաղափարները՝ Մամուրյանը դրանք վերախմաստավորում է ազգային կեցության համատեքստում: Նա արժեվորում է նաև հայ հեղինակների իրավական հայացքները, որոնցում առավել շեշտադրվում է հիմնահարցերի գործնական նշանակությունը:

Ըստ Մամուրյանի՝ մարդու իրավաբանական ելակետը իրավունքի և օրենքի ծագման ակունքների, տեսակների ու բնության, իրավունքի և բարոյականության հարաբերակցության իմացությունն է, որով պայմանավորված են օրինաստեղծման ու իրավաստեղծման գործընթացների բնույթը, միտումներն ու նպատակը: «Իրավունք» հասկացությունը, նրա համոզմամբ, միանշանակ սահմանելի չէ, ինչը նա պարզաբանում է Հ. Սվաճյանի հոդվածներից մեկի նախաբանում. «Արդարև՝ *Իրաւունք* ըստածը շատ մեծ, կնճռոտ խնդիր մ'է, որու մի շատ կէտերը դեռ անլոյծ կ'մնան, այնպէս որ մարդկային յաջողական յառաջադիմութեան հետ զանազան երևումներ ունենալով՝ տակաւին որոշ *սահման* մը չէ

ստացած»¹։ Իրավունքի սահմանումները փոփոխվում են՝ պայմանավորված ժամանակի խնդիրներով, փիլիսոփայելու եղանակով, իրավունքի ըմբռնմամբ և կիրառման մեթոդներով։

Հիմնվելով Հ. Թիերսլենի և Հ. Ահրենսի բնաիրավական տեսությունների վրա՝ Մամուրյանը իրավունքը բաժանում է երկու տեսակի՝ «**բնական** կամ **նախնական**, **ածանցեալ** կամ **պայմանական**»²։ Բնական իրավունքները «ուղղակի մարդուս բնութենէ կ'ծագին, իրեն ընդաքոյս են և գոյակից»։ Դրանք գործադրվում են՝ անկախ մարդու կամքից կամ որևէ պայմանականությունից, քանզի բացարձակ են. «Այս իրաւունքն ամէն մարդ կ'վայելէ իր կենաց, ազատութեան, արժանութեան (dignite') պատուոյ և այլն վերաբերութեամբ»³։ Մամուրյանը փաստարկում է բնական իրավունքի գոյաբանական հաստուկ կարգավիճակը, այն է՝ դրա անփոփոխելիությունն ու անկախությունը մարդու գիտակցությունից ու իրավահաստատումներից։

Պայմանական կամ ածանցյալ իրավունքը չի բխում մարդու բնությունից, այլ «մարդկային գործունեութեամբը կ'ստացուին. անոնց ծնունդ տուող պայմանը լոկ անհատ մը կամ ուրիշ քանի մ'անձեր կրնան մէջ բերել»։ Բայցն պայմանական (դրական) իրավունքը բնական իրավունքի ձևայնացման ու գործադրման արդյունքն է։ Որպես օրինակ՝ Մամուրյանը նշում է սեփականության իրավունքը, որը «գործողութենէ մը կրնայ ծագիլ, այսինքն նախաբնակութենէ (premie're occupation) կամ աշխատութենէ. բայց ըստ ինքեան նախնական իրաւունք մ'է, որ մարդկային անձնականութենէ կ'ծագի, թէն ստացման եղանակներն այլազան են ու տարբեր»⁴։ Նույն կերպ նա հաստատում է, որ պայմանագրերով ու դաշնագրերով սահմանված իրավունքները պետք է բխեն բնական իրավունքի սկզբունքներից, այլապես դրանք վավերական չեն համարվի։ Միաժամանակ շեշտում է, որ «դաշնագրերը չեն կարող երբէք արտադրել կամ ջնջել բնական իրաւունք մը», ինչպես նաև որևէ ժողովրդի պարտավորեցնել հրաժարվել ազգությունից կամ կրոնից։ Հետևաբար՝ «մարդուս բնական իրաւունքն անվաճառելի և անտնօրինելի են, մարդկային բնութեան բնակից լինելով անհատներու քմահաճ կամքէն և տրամադրութիւններէն գեր 'ի վեր են. չեն կարող կորնչիլ մարդուս գործով և ոչ իսկ յանցանքով...»⁵։

Մամուրյանն առանձնացնում է բնական հիկզ իրավունք. անհատական (անձի) ազատություն, արժանապատվություն, դավանանքի և պաշտամունքի իրավունք, կրթության ազատություն և յուրացնելու իրավունք: Հստակրա՝ «Չկայ ուրիշ բնական իրաւունք մ'որ այս իրաւանց մէկուն մէջ չմտնէ»⁶:

Ա. Մարդու առաջնային իրավունքը համարելով *անձնիշխանութունը*՝ իր անձին տէրը լինելը», մտածողը հաստատում է. «Անհատական ազատութիւնն ինքնին իրաւունք մ'է, և միւս իրաւանց գործածութեան պայմանը»: Առանց այս ազատութեան՝ մյուս իրավունքները կորցնում են նշանակությունը: Անհատական ազատությունն օտարելով՝ մարդուն զրկում են բոլոր կարողություններից, ուրեմն՝ *անձի ազատությունը* «բազմադիմի իրաւունք մ'է», որ դրսևորվում է տարբեր ձևերով: Օրինակ՝ մարդու կյանքի իրավունքի անձնեման խոչընդոտելը հաստատում են բոլոր օրենսգրքերը և առավելագույն պատիժ սահմանում մարդասպանության համար, բայց «մահը պատիժ մ'է, և չկրնար սահմանել անհատին իրաւունքն, ինչպէս որ բանտարկութեան պատիժը չսահմաներ բուն անհատական ազատութիւնն, և տուգանաց պատիժը՝ սեպհականութեան իրաւունքը»: Այսինքն՝ թե՛ն քրեական պատիժները սահմանվում են կատարված հանցագործություններին համապատասխան, բայց դրանք չեն կարող առհասարակ օտարել մարդու ազատության իրավունքը: Այս հայեցակէտով Մամուրյանը նաև դատապարտում է ինքնասպանությունը, քանզի *կյանքի իրավունքը* «կ'պահանջէ որ մարդս իր կենաց վնաս չբերէ, եղյալէս տէրութիւնն զայն պահպանէ թշնամական յարձակմանց և բնական վտանգներու դէմ»⁷: Հետևաբար՝ պետության գլխավոր գործառույթներից է պայքարը համաճարակների, երաշտի, սովի ու ծայրահեղ աղքատության դէմ:

Մամուրյանի դիտարկմամբ՝ բնական իրավունքների օրինական պաշտպանությունը համապատասխան է ժողովուրդների քաղաքակրթական զարգացմանը, և «առաւել կամ նուազ ապահովութեան մէջ կ'գտնուի ըստ տեղոյ և պարագայի»⁸: Քաղաքակիրթ պետություններում մարդու բնական իրավունքներն ու ազատությունները սահմանադրորեն պաշտպանված են՝ որպէս պետության գերագույն խնդիր: Հետամնաց երկրներում այս խնդիրն անտեսված է, որովհետև «Մարդ ի բնէ անօրինասէր է, իր

վայրենի վիճակին մեջ... ոչ բարոյական և ոչ մտաւորական օրինաց նշոյլն ունի»⁹: Սեղիքը քննելով բարոյականության համատեքստում՝ մտածողը հավաստում է, որ մարդկությունը դեռևս առաջնորդվում է ոչ թե բարոյական չափորոշիչներով, այլ քաղաքական ու տնտեսական շահերով. «Եւ ըսել... որ մարդս՝ քաղաքակրթութեամբ օրինապահ, արդարասէր, ճշմարտասէր եղած է, պնդել թէ մարդասիրութեան, անձնուիրութեան... զգացումներն այնքան կ'զարգանան մեր ընկերական վիճակին մեջ՝ որ... ամեն օրէնք, արգելարան, զետան և որ և է մարմնական պատիժ վերնալով... եղբայրակցութիւն, ներդաշնակութիւն պիտի տիրեն գործերու, շարժումներու, գաղափարներու մեջ, պարզապէս արթուն երագել է»¹⁰: Հետևաբար՝ «քաղաքակիրթ» աշխարհը ևս ինքնակրթվելու, բարեփոխվելու խնդիր ունի:

Բ. Արժանապատվությունը Մամուրյանն իմաստավորում է որպէս մարդու «անձնականութեան էական արժէք», որի աղբյուրը բանականությունն է: Նա տարբերակում է մարդու պատիվը արժանավորությունից, քանզի պատիվը չի բխում մարդու բնությունից, այլ «իր բարոյական ընթացքէն, իր գործերէն կ'ծագի և գիտակցութիւնն (խիղճը) զայն կը հաստատէ»¹¹: Մարդը պատիվ ունի Աստծո, մարդկանց և իր խղճի առջև, նրա պարկեշտությունը հավաստվում է իր արարքներով, ուստի՝ հասարակության մեջ յուրովի են դրսևորվում անհատական պատիվը, ընտանեկան պատիվը, ազգի պատիվը, քաղաքական ու հասարակական պաշտոնյաների պատիվը: Ըստ Մամուրյանի՝ արժանապատիվ կեցվածքը և՛ անհատի, և՛ ժողովուրդների հարատւության երաշխիքն է: Արժանապատվությունը ենթադրում է ևսն պարտավորությունների կատարում՝ սեփական անձի, ընտանիքի, ազգի ու պետության նկատմամբ. «Պարտուց գիտակցութեան մեջ կ'կայանայ ժողովրդեան մը գերազանցութիւնը, բարոյական արիւթիւնն ու համերաշխութիւնն՝ որ կ'դիմակայեն ամեն աշխարհային վատ հակումներու և աղէտից»¹²: Ժողովրդի պարտքն է մշակել իր բարոյական առաքիլությունները և «մարդկութեան մեջ փայլիլ իբրև պարտաճանաչ և իրաւասէր»¹³:

Գ. Դավանանքի և պաշտամունքի ազատությունը՝ որպէս բնական իրավունք, Մամուրյանը քննում է տարբեր հարթությունների վրա: Աստվածապաշտության ազատությունը բոլոր ժամանակներում արժեւորվել է

որպէս անօտարեւի իրավունք, սակայն, ըստ մտածողի, «պաշտաման ազատութիւնն պարզապէս զԱստուած պաշտելու կարողութիւնը չէ»¹⁴: Մարդիկ կրօնն ըմբռնում են վարդապետության, խորհուրդների ու ծիսակարգի միջոցով, ուստի՝ պետք է հարգել տարբեր ժողովուրդների ծեսերը, հավատալու և հավատը մեկնաբանելու ուրույն եղանակներն ու իրավունքը, խորհրդակատարության ազգային կերպը: Կրօնական հանդուրժողությունն ու դավանանքի ազատությունը փոխկապված են. **ազատախոս** ժողովուրդների համար օրինաչափ է յուրաքանչյուր ազգի հոգևոր ինքնությունը: Միևնույն բռնապետական երկրներում կրօնափոխությունը դառնում է պետական հարկադրանք. «Երբ վեհապետ մը կամ կառավարութիւն մ'իր չհաւանած կրօնի դէմ կ'զինի և անոր պաշտաման արարողութիւնները կ'արգիլէ, մի միայն իր կրօնինը կատարել տալով՝ բռնութիւն կ'գործէ»: Հետևաբար՝ եթէ հպատակության կարգավիճակում Մամուրյանը ներազգային հարաբերություններում հռչակում է **ազգի և եկեղեցու միասնականության սկզբունքը**, ապա տիրապետող պետության հետ հարաբերություններում շեշտում է Հայ եկեղեցու ինքնիշխանությունը, ազգի հոգևոր անկախությունն ու դավանանքի ազատությունը. «Իրատեսքն ազատութիւնն է. և ազատութիւնն Եկեղեցւոյ և Պետութեան փոխադարձ անկախութեան մէջ կ'կայանայ...»¹⁵:

Դ. Խորհելու, խոսքի և կրթության ազատություն. Բնական այս իրավունքները Մամուրյանը փաստարկում է որպէս փոխալայնամասվորող արժեքներ: Ըստ նրա՝ «Ընկերութեան մէջ մարդս իրատեսք և ազատութիւն ունի յայտնել իր գաղափարները տպագրութեամբ, խօսքով, և ուրիշ որ և է հրատարակութեան միջոցաւ բացատրել»¹⁶: Հրապարակախոսությունը ազգերի քաղաքակրթվածության աստիճանի դրսևորումն է, ինքնարտահայտման և ազգային խնդիրների քննարկման լայն ասպարեզ: Կարևորելով մամուլի անհրաժեշտությունը ազգային-քաղաքական կյանքում՝ հրապարախախտը հորդորում է. «...այն, որ ձայն ունի պետք է, որ կանխավ ազգային իրավանց վրա լուսավոր շավիղ մը գծէ, միտքն արթուն պահէ և իր գրիչն իբրև արդարության և վրեժխնդրության սուր մը մեր հայրենի տան և եկեղեցվույն հայտնի ու անհայտ թշնամյաց դէմ շողացնէ»¹⁷: Միաժամանակ քննադատում է մամուլի ազատությունը սահմանափակող օսմանյան օրենքները՝ նշելով, որ «գրելու անսահման

ազատություն մը դեռ անհնար է ձեռք ձգել ընկերական այս շինովի դրության և իրարու հակասական և անբնական օրինաց մեջ»¹⁸:

Ըստ Մամուրյանի՝ ազատ խորհրդածությունը և՛ իրավունք է, և՛ արվեստ, որը մտավոր ունակությունների մշակման արդյունքն է: Բայց բոլորին տրված չէ ինքնուրույն խորհելու և իր գաղափարներն արտահայտելու կարողությունը: Ընդ որում՝ ազատ մտածողությունը, որ նույնիսկ անկախության պայմաններում դուրիս չէ, բուսատիրության պարագայում անհնարին է: Ուրեմն՝ «ճշմարիտ խորհող մը գերբնտիր ու ազդեցիկ գործակ մ'է լուսաւորութեան ծաւալման մեջ»¹⁹: Այս համատեքստում մտածողը վերլուծում է նաև *հասարակական կարծիքի* դերը՝ որպէս ազգային մտածողության ու խոսքի ազատության դրսևորում: Նրա դիտարկմամբ՝ ազատ մամուլ ունեցող բարեկիրթ ժողովրդի հասարակական կարծիքը բարոյական օրենք է, որը ներգործում է ոչ միայն անհատներին, այլև կառավարությունների գործունեության վրա: Հասարակական կարծիքը «հանրական շահուց կշառակն է, ժողովրդեան մը խիղճն, դատողութիւնն է որ այս կամ այն խնդրոյ վրայ վճիռ կ'արձակէ: Այս վճիռն այնքան ուղիղ և օրինաւոր է որչափ որ խիղճն ու միտքը լուսաւոր և արդար են»²⁰: Այդպիսով՝ հասարակական կարծիքն իմաստավորվում է ժողովրդի դատողունակությամբ և արդարամտությամբ: Իսկ հասարակական կարծիքի ձևավորման պայմանները, ըստ Մամուրյանի, օրինական ազատությունն ու բարոյական առաքինություններն են, իրավունքների և պարտականությունների ճանաչումը, ազգային գործերին իրազեկությունն ու մասնակցությունը:

Ե. Երկրի բնական հումքը, հարստությունները յուրացնելու իրավունք. Մամուրյանի համոզմամբ՝ «Արտաքին աշխարհին առարկաներն իր նիւթական կէնաց յատկացընելու ազատութիւնն, մարդուս կազմութենէ կ'ծագի»: Մարդը պարտավոր է իր մարմնական պահանջունքները բավարարել, ուստի՝ երկրի բնական հարստությունները յուրացնելը «անժխտելի, անելի ևսիրական իրաւունք մ'է քան բոլոր միւս իրաւունքն»: Նա տարբերակում է յուրացնելու և սեփականության իրավունքները՝ առաջինը համարելով բնական, իսկ երկրորդը՝ դրական-պայմանական իրավունք. «Ելութեան իրաց իւրացումն ազատութեան մէկ յայտնութիւնն է, սեփականութիւնն անոր մէկ արդիւնքը»²¹: Ընդ որում՝ աշխատանքը

ևս, որի միջոցով մարդը տիրապետում է բնական իրերին, նույնպես բխում է յուրացնելու իրավունքից:

Մամուրյանի բնաիրավական հայեցակարգն ամբողջանում է *ազատության* հիմնախնդրի ինքնատիպ մեկնաբանությամբ: Ըստ նրա՝ ազատության աղբյուրը Աստծո շնորհած կամքն ու բանականությունն են: Հռչակելով «Ազատությունը խոհուն մտաց... ազնիվ առաջնորդն է»²² կարգախոսը՝ նա ազատությունը պայմանավորում է մարդու բանախոհությամբ: Մարդն իր բանականությունը մշակելով՝ կամքն ուղղում է դեպի բարին, ճշմարիտն ու զեղեցիկը, և «ազատ է իրապես այն մարդն որ իր մտաւոր և բարոյական կարողութիւններն այս եռակի նպատակն ունին և օր քան զօր նոյն նպատակին հասնելու կ'նկրտին»²³: Բայցև մտածողը կարևորում է մարդու ազատ գործունեությունը ոչ միայն սեփական անձի, այլև ու հատկապես ազգային շահերի ու նպատակների իրագործման համար: Այս նպատակով նա դասակարգում է ազատության դրսևորումները հասարակության մեջ.

անհատական ազատություն, որ «անհատին ինքնորոյն իրաւանց կ'պատկանի»²⁴,

ընտանեկան ազատություն՝ պառնակալելու «տուն-սրբավայրը» արտաքին վտանգներից,

քաղաքացիական ազատություն՝ պաշտպանելու քաղաքացիների իրավունքները,

քաղաքական ազատություն, որ «ազգի մանդամները կ'ամփոփէ կ'պառնակէ և բոլոր միւս ազատութեանց վաւանն է»²⁵,

կրոնական ազատություն, որով նվիրագործվում են մարդու խղճի ու Աստծո ատկությունները, տարբեր դավանանքների գոյության իրավունքը,

իմացական ազատություն՝ երաշխավորելու մարդու ճանաչողական գործունեությունն ու դրա արդյունքների ծավալումը հասարակության մեջ,

տնտեսական ազատություն, որով հնարավոր է դառնում ժողովրդի բարեկեցության ապահովումը, այն բաժանվում է տարբեր ճյուղերի՝ աշխատանքի, փոխանակության ու առևտրի ազատության:

Մամուրյանը *սեփականության իրավունքը* մեկնաբանում է լայն իմաստով՝ անհատական ազատության համատեքստում: Ըստ նրա՝

«Ազատութիւնը մարդուս անձէն կ'սկսի, մարդս սեպհականատէր կը ծնի, և իր... առաջին սեպհականութիւնն է իր անձն, իր կարողութիւնները, միով բանիւ իր ազնիւ եութիւնը գոր չէ կարող ինքնին ուրիշ որ և է մէկու տալ, աւանդել, վաճառել, սպանել առանց երկնային և բնական օրինաց դէմ սոսկալի ռճիր մը գործելու: Մարդուս *ճշդ* փոխադրելի չէ»²⁶:

Անձնիշխանութեան իրավունքի ելակետից ևս հիմնավորում է աշխատանքի արդյունքների յուրացման իրավունքը: Եթէ մարդն իր անձի ազատ տերն է՝ ըստ բնութեան, ապա պարտավոր է նաև «ինքնիշխան տէր լինիլ այն ամէն արդէանց՝ որ իր անձնականութենէ կ'ըլլին, որ իր եութեան մասը կ'կազմեն աշխատութեան շնորհիւ...»²⁷: Սեփականութեան իրավունքի աղբյուրը ոչ թէ դրական օրէնքն է, այլ բնականը: Դրական օրէնքը միայն կանոնավորում, պահպանում է սեփականությունը օրինական միջոցներով: Աշխատանքի ազատությունը ենթադրում է մարդու իրավունքը՝ ազատ կամքով ընտրելու գործունեության ցանկացած ոլորտ: Ըստ նրա՝ «Աշխատութիւնը բնութեան մէկ անհրաժեշտ օրէնքն է, գոյութեան էական մէկ պայմանն է»²⁸ իսկ աշխատանքի ազատությունը սեռային հասկացություն է, որը բովանդակում է տնտեսական մյուս բոլոր ազատությունները՝ լինելով դրանց հանրագումարը:

Մամուրյանը քննարկում է բնական իրավունքների պահպանման խնդիրը: Թէն մարդն օժտված է բնական ազատություններով, բայց ևս «ի բնէ ընկերական է նաև... և փոխադարձ յարաբերութեանց պատճառաւ՝ քաղաքական օրինաց ենթակայ»²⁹: Այս օրէնքները սահմանում են իրավունքներ ու պարտականություններ, որոնք հավասարակշռում են պետական մարմինների վերահսկողությամբ: Երբեմն կառավարությունները վարում են մարդու անհատական, հասարակական, քաղաքական, տնտեսական գործունեությունն ու իրավունքները սահմանափակելու կամ արգելելու քաղաքականություն՝ ճնշելով ժողովրդի կենսական ուժերը: Այս ամենի հետևանքով, ըստ Մամուրյանի, պետությունը «կործանիչ աղանդներու դուռ մը կ'բանայ և անողակալի ընկերհաշտութեան (socialisme) և հասարակականութեան (communisme) դատին... կ'նպաստէ»³⁰: Մոցիալիզմը և կոմունիզմը ևս դատապարտում է իբրև սխալ սկզբունքների վրա հիմնված «յոռի» տեսություններ, որոնք կաշկանդում

են մարդու ազատ միտքը, գծառնություն և ատելություն սերմանում ժողովրդի մեջ՝ հաճախ դատաւարական հեղափոխության պատճառ:

Մամուլյանը մեկնաբանում է օրենք, օրինականություն, պատասխանատվություն հասկացությունների իմաստը, իրավունքի ու պարտավորությունների հարաբերակցությունը: Ըստ ծագման աղբյուրի՝ ևս օրենքները ևս բաժանում է *հավերժական-բնական և դրական (պայմանական)* տեսակների. «կան ... օրենքներ՝ որ մշտնջենաւոր սկզբանց վրայ հիմնուած են և երբ փոփոխութեան ենթարկին՝ կ'կորսուցնեն իրենց ոյժն ու նպատակն»: Այդպիսին են բարոյական օրենքները, եկեղեցական ավանդական որոշ իրավունքներ, որոնք պատմականորեն վերածվել են օրենքների և արժեքորվում են որպէս եկեղեցու ինքնօրինությունը պահպանող անփոփոխ կանոններ:

Դրական օրենքները «ժամանակաւոր պիտոյից և պարագայից վրայ հիմնուած լինելով՝ փոփոխական կ'համարուին և... կ'կատարելագործուին»²¹: Դրանք բխում են բնական օրենքներից ու ձևայնացման ընթացքում չեն կորցնում վերջինների էական սկզբունքները, որոնք, իհարկէ, երբեմն խախտվում են օրենսդրական գործընթացում, միջազգային դաշնագրերում ու քաղաքական պայմանագրերում: Մամուլյանի բնորոշմամբ՝ «օրենսդրական գիրերն... բնության օրինաց դեմ պատվար մ'են»²²: Քաղաքակրթության հետևանքներից է այն, որ մարդը շեղվել է արդարության ու բնության օրենքներից: Հետևաբար՝ պետք է «բուն մարդ լինի մարդերու օրենք տվողն, և մարդիկ լինին մարդուն շինած օրենքը հաստատողը...»²³:

Մամուլյանը հիմնավորում է, որ օրինաստեղծման հիմքը կոնկրետ ժողովուրդների սովորութային իրավունքն է, պատմական փորձություն անցած ավանդույթները և ազգային ոգին: Նրա և հայ այլ մտածողների (Մ. Աղաբեկյան, Գր. Օտյան, Մ. Օրմանյան և այլոք) այս հայեցակետը համահունչ է էդ. Բյորքի, Շ.Լ. Մոնտեսքյեի, Բ. Կոնստանի և իրավունքի պատմական դպրոցի ներկայացուցիչների գաղափարներին: Կ.Ֆ. Մավինյին հաստատում է, որ իրավունքի ողջ պատմությունը *այն սուբստանցիայի* դանդաղ, սահուն բացահայտումն է, որն ի սկզբանէ գոյություն ունի ժողովրդական ոգու ընդերքում: Ուրեմն՝ «ամեն օրենք սովորութեանց և ժողովրդային հաւատով կ'կերպաւորի, ապա օրենսդրութեամբ կ'հաստա-

տուի, միշտ թագուս ազդեցութեանց բերմամբ, և չէ թէ յատկապէս օրէնսդրի քմածին իշխանութեամբ»:

Վերոհիշյալ խնդիրը քննելով պատմահամեմատական սկզբունքով՝ Մամուրյանը հաստատում է, որ Աստված իր կամքով սահմանել է, որ «մարդիկ իրենց բնականության գործությամբ և արիությամբ իրենց ընկերական կացությունը ընտրեն»³⁶: Օրինակ՝ ամերիկացիները Աստվածաշնչյան օրենքներն ընդունել են՝ որպէս իրենց պետության սահմանադրական հիմք, Անգլիան գերադասում է իր ավանդական օրենքները: Հայ ժողովուրդը ի սկզբանէ կառավարվել է չգրված օրենքներով և «խառն» օրենքների կարիք բնավ չի ունեցել, քանզի «Բնական անգիր կանոններ» որ սովորությանց մի մասը կկազմէին, բավական էին: Ընդ որում՝ եթէ ներկայում էլ օտար ու հակասական բոլոր օրենքները լուծարվեն, հայ ազգը կկարողանա ինքնակառավարվել ավանդական կանոնակարգով: Մտածողի համոզմամբ՝ եթէ որոշ ազգերի անհրաժեշտ են հատուկ դրական օրենքներ, «առ մեզ» մերիկները սովորություն է դարձած և անոնց *ռզին* մեր բարուց վրա դրոշմված»³⁷: Նա եզրակացնում է, որ հնագույն ազգերին չի կարելի վերագրել այն հատկանիշները և չափորոշիչները, որոնք բնորոշ են Նոր ժամանակի պետություններին:

Համեմատելով աստվածապետական, միապետական և «սահմանադրական պետությունների օրենսդրական սկզբունքները» Մամուրյանն ընդունելի համարում է միայն սահմանադրական կառավարությունը, որ «արդարությունն ու բարոյականը հիմ բռնելով» ամեն մարդու, հետևապէս ազգային իրավանց և պարտուց փոխադարձ հարաբերություններու օրենքը կհաստատէ...»³⁸, մինչդէռ միապետական կառավարություններն օրենքներ են հրապարակում՝ ամրակայելու իրենց ինքնակալությունն ու բռնությունը:

Նկատի ունենալով դրական օրենքների փոփոխելիությունը՝ նա կատարյալ չի համարում նույնիսկ սահմանադրական օրենքները, որոնք պետք է կատարելագործվեն՝ ժամանակի պահանջներին համահունչ: Իսկ օրենքների գործադրելիությունը մտածողը պայմանավորում է առաջին հերթին օրենսդիրների՝ իրենց իսկ հրապարակած օրենքներին ենթարկվելով. «Երբ օրինաց աւանդապահը վար կ'զարնէ այն օրենքն որով պիտի կառավարէ, կառավարեալներն ի նչպէս վեր բռնեն, պահեն զանոնք»³⁹:

Այդպիսով՝ Մամուրյանը հռչակում է օրենքի առջև բոլորի հավասարությունը՝ որպես իրավական պետության հիմնարար սկզբունք: Միաժամանակ նա մերժում է թե՛ հավասարության գաղափարի բացարձակացումը, թե՛ ծայրահեղ անհավասարությունը. «Եթե կարելի չէ տիեզերային հաւասարութեան վարդապետութիւնը տեսապէս ի գործ դնել, ներելի չէ նաև բնական անհաւասարութիւնները պատրուակ բռնելով արհեստականներ ստեղծել»³⁹: Ըստ նրա՝ օրենսդրական և դիվանագիտական գործընթացներում հատկապէս կարևոր է հաշվի առնել զանազան ժողովուրդների բնության, ազգային յուրակերպությունների տարբերությունները, որոնցով պայմանավորված է բնական անհավասարությունը:

Մամուրյանի հայեցակարգում ուշագրավ է *իրավունքի* և *պարտքի հարաբերակցության* խնդրի լուսաբանումը: Այս հասկացությունները նա սահմանում է դրանց փոխկապվածության և փոխպայմանավորվածության մեջ. «Արդ՝ իրաւունքը գործնական պարտ, և իր հիմը բարոյականի մէջ է: Իրաւունք՝ այն կարողութիւնն է որով մարդ պարտուց հրամայածը կը կատարէ տապալելով իսկ այն ամէն խոչընդոտները զորս ուրիշի կամքը կ'յարուցանէ իրեն դէմ՝ պարտուց կատարումն արգիլելու համար»⁴⁰:

Պարտավորության աղբյուրը *խիղճն* է, որի միջոցով մարդը տարբերում է բարին ու չարը: Բանականությունը դատում է մարդկային գործերի բարոյականության աստիճանն այնպէս, ինչպէս գաղափարների ճշմարտացիությունը: Ըստ Մամուրյանի՝ օրինական է այն հասարակությունը, որտեղ անհատը կարող է ազատորեն բարիք գործել և իր իրավունքները գործադրել: *Պարտականությունն իրավունքի չափն է*, և որտեղ պարտականություն չկա, այնտեղ մարդը գործադրելու իրավունք չունի: Դրանով իսկ «*պարտուց գաղափարը իրաւունքի տարածութիւնը կ'որոշէ* և արդարև պարտը միայն կ'որոշէ բոլոր իրաւանց սահմանը (ընդգծումը.- L.U)»⁴¹:

Պարտականությունները բազմաբնույթ են, որոնցից առաջնայինը անձնիշխանությունը պահպանելն է: Բարոյական հարթության վրա Մամուրյանն առավել կարևորում է անձնավորությունը, բարեգթությունը, ազգասիրությունը և այլն: Նա հիմնավորում է, որ բարոյականի ըմբռնումը միանշանակ չէ բոլոր ժողովուրդների մոտ. «բարոյականը գործնականին

մէջ... կը փոխուի տեղւոյ, կլիմայի, բարոց և կրօնական ու քաղաքական հիմնարկութեանց պահանջներուն համեմատ»⁶։ Բարոյական հիմնարար կանոնները որոշարկում են ընտանեկան, հասարակական, ազգային հարաբերությունները և պատասխանատվության չափը։ Այնուամենայնիվ, Մամուրյանի դիտարկմամբ, ժողովուրդների մոտ դեռևս բավարար չէ մարդասիրությունը, այլասիրությունը, հոգևոր արժեքների իմաստավորումը՝ որպէս հարաբերությունների կարգավորման հիմք։ Նրա մեծ նրազանքն էր, որ մարդիկ «բարոյագիտութիւնն այնպիսի լայն ու հանրօգուտ սկզբանց վրայ հիմնեն որ մէն մի ժողովուրդ, մէն մի ընկերութիւն, մէն մի ցեղ, մէն մի ընտանիք իբր կղզիացած անհատականութիւններ չնկատուին... իրենց անձուկ բարոյական գաղափարներովը... այլ համերաշխ մարմին մը»⁶։ Ակնհայտ է, որ մտածողը նոր տիպի *հումանիտական քաղաքակրթության* մասին է ակնարկում, որը կլինի ժողովուրդների ազգային ինքնատիպության հիման վրա ձևավորված հոգևոր-բարոյական ընդհանուր արժեհամակարգով ինքնակառավարվող համամարդկային ընկերակցություն։

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Սվաճեան Յ.Կ., Իրաւագիտութիւն եւ Իրաւունք // Արեւելեան Մամուլ.- Զմիտնիա, 1881, Թիւ 4, էջ 137:
2. Մամուրեան Մ., Բնական եւ պայմանական իրաւունք // Արեւելեան Մամուլ, 1875, Թիւ 4, էջ 121:
3. Նույն տեղում, էջ 122:
4. Նույնը:
5. Նույնը:
6. Նույն տեղում, էջ 123:
7. Նույնը:
8. Նույնը:
9. Մամուրեան Մ., Օրինասիրութիւն // Արեւելեան Մամուլ, 1897, Թիւ 12, էջ 405:
10. Նույն տեղում, էջ 407:
11. Մամուրեան Մ., Բնական եւ պայմանական իրաւունք, էջ 124:
12. Մամուրեան Մ., Բարոյական արիւթիւն // Արեւելեան Մամուլ, Հոկտեմբեր 1892, էջ 483:

13. Նույն տեղում, էջ 484:
14. Մամուրեան Մ., Բնական եւ պայմանական իրաւունք, էջ 124:
15. Նույն տեղում, էջ 125:
16. Նույնը:
17. Մամուրյան Մ., Հայկական նամականի, Երկեր.- Եր., 1966, էջ 458:
18. Նույն տեղում, էջ 457:
19. Մամուրեան Մ., Ո՞վ ինքնուրոյն կը խորհի // Արեւելեան Մամուլ, 1896, Թիւ 13, էջ 386:
20. Մամուրեան Մ., Հասարակաց կարծիք // Արեւելեան Մամուլ, 1874, Թիւ 8, էջ 346:
21. Մամուրեան Մ., Բնական եւ պայմանական իրաւունք, էջ 126:
22. Մամուրյան Մ., Անկլիական նամականի կամ Հայու մը ճակատագիրը, Երկեր.- Եր., 1966, էջ 78:
23. Մամուրեան Մ., Ազատութիւն // Արեւելեան Մամուլ, 1871, Թիւ 10, էջ 478:
24. Նույն տեղում, էջ 479:
25. Նույն տեղում, էջ 480:
26. Նույնը:
27. Նույն տեղում, էջ 481:
28. Մամուրեան Մ., Ազատութիւն աշխատութեան // Արեւելեան Մամուլ, 1871, Թիւ 11, էջ 525:
29. Մամուրեան Մ., Ազատութիւն, էջ 482:
30. Նույն տեղում, էջ 483: Տես նաև՝ Մամուրեան Մ., Տնտեսական // Ծաղիկ.- Զմիւռնիա, 1867, Թիւ 144, էջ 654:
31. Մամուրեան Մ., Մի քանի մոռցուած ճշմարտութիւններ // Արեւելեան Մամուլ, 1885, Թիւ 2, էջ 57:
32. Մամուրյան Մ., Հայկական նամականի, Երկեր, Եր., 1966, էջ 459:
33. Նույն տեղում, էջ 492:
34. Օրէնսգիտական Համաժողով // Արեւելեան Մամուլ, 1896, Թիւ 17, էջ 515:
35. Մամուրյան Մ., Անկլիական նամականի կամ Հայու մը ճակատագիրը, էջ 73:
36. Նույն տեղում, էջ 112:
37. Մամուրյան Մ., Հայկական նամականի, էջ 491-492:
38. Մամուրեան Մ., Թղթակցութիւն // Արեւելեան Մամուլ, 1873, Թիւ 8, էջ 356-357:
39. Մամուրեան Մ., Հաւասարութիւն // Արեւելեան Մամուլ, 1893, Թիւ 1, էջ 32:
40. Մամուրեան Մ., Պարտ եւ իրաւունք // Արեւելեան Մամուլ, 1873, Թիւ 4, էջ 165:
41. Նույն տեղում, էջ 166:
42. Մամուրեան Մ., Անձնասէ՞ր թէ այլասէր // Արեւելեան Մամուլ, 1895, Թիւ 7, էջ 193:
43. Նույն տեղում, էջ 196: